



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19084

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի փետրվարի 25-ի թիվ 56-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/52-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԴԻԱՆԱ ՇԱԽՐԱՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյան, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Դիանա Շախրամանյանին (արտոնագիր թիվ 2002) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Գուրգեն Վարդանյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ, հայտնել է, որ Դիանա Շախրամանյանը ներկայացրել է իր շահերը ԿԴ1/1085/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում: Դիմողի պնդմամբ փաստաբանը պատշաճ կերպով ներկայացրել է իր շահերն առաջին ատյանի դատարանում, սակայն վճիռն այդուհանդերձ կայացվել է ոչ իր օգտին: Նշված վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը եղել է չստորագրված, ինչի արդյունքում բողոքի ընդունումը մերժվել է: Դիանա Շախրամանյանը նաև ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը վարույթ չի ընդունվել: Դիմողը գտնում է, որ փաստացի խախտվել են իր իրավունքները և թեպետ, ինքը գիտակցում է, որ փաստաբանը անստորագիր բողոքն ուղարկել է շփոթմամբ և դա կատարել է ոչ դիտավորյալ, այնուամենայնիվ, գտնում է, որ փաստաբանը պետք է թույլ չտար անգամ անզգուշություն: Այդ իսկ պատճառով խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 02.07.2019թ. թիվ 210-Ա/ԿԳ-19084 որոշմամբ փաստաբան Դիանա Շախրամանյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի

Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

03.07.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

25.02.2020 թվականին Դիմողը ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ փաստաբանի գործած սխալը որևէ բացասական հետևանք չի առաջացրել իր համար, քանի որ հարկադիր կատարում ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի Աբովյանի բաժանմունքի կողմից 2019թ. նոյեմբերի 19-ին վերսկսված և նոյեմբերի 20-ին ավարտված թիվ 03637165 կատարողական վարույթի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունքում պարզվել է, որ իրեն, որպես պարտապանի, պատկանող գույք կամ եկամուտներ, որոնցից կարելի է բռնագանձում տարածել չեն հայտնաբերվել:

Գրությամբ Դիմողը հայտնել է, որ փաստաբանն իր գործողություններով իրեն որևէ վնաս չի հասցրել և որ ինքը վերջինիս կատարած գործողությունների նկատմամբ որևէ բողոք չունի, ուստի խնդրում է փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել և նրան չենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

17.06.2019 թվականին փաստաբան Դիանա Շախրամանյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ ներկայացրել է Դիմողի՝ Գուրգեն Վարդանյանի շահերը ԿԴ1/1085/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում: Դատարանը կայացրել է վճիռ իր վստահորդի դեմ, որն էլ իր կողմից բողոքարկվել է վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ բողոքի ներկայացման ժամանակ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, մասնավորապես, ստորագրված վերաքննիչ բողոքի փոխարեն գրասենյակի գործավարը փոստային ծրարի մեջ է դրել անստորագիր՝ գրասենյակում պահելու համար նախատեսված տարբերակը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը անստորագիր վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժել է:

Փաստաբանը նաև նշել է, որ ստանալով նշված որոշումը կատարել է օրենքով նախատեսված բոլոր գործողությունները՝ ստեղծված իրավիճակն ուղղելու համար: Մասնավորապես՝ ներկայացրել է նոր վերաքննիչ բողոք՝ դրան կցելով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն: Միջնորդությունը մերժվել է,

ինչպես և դրա հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը: Ներկայացվել է նաև վճռաբեկ բողոք, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ չի ընդունել:

Փաստաբանը նշել է, որ թեև համաձայն չէ ՀՀ վերաքննիչ դատարանի դիրքորոշման հետ, սակայն միևնույն ժամանակ ընդունում է, որ որպես փաստաբան պետք է բողոքը ծրարավորելու գործընթացը չվստահեր գործավարին:

Փաստաբանը ներկայացել է հորհրդի նիստին և ըստ էության պնդել է բացատրությամբ իր կողմից ներկայացված փաստարկները:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը հորհրդին.

30.01.2019թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանը կազմել է եզրակացություն:

03.09.2019թ կարգապահական գործը հանձնվել է հորհրդին:

Հորհրդի նիստը տեղի է ունեցել 18.02.2020թ ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

հորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Փաստաբանը ներկայացրել է Դիմողի շահերը ԿԴ1/1085/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում: Սույն փաստը հաստատվում է Դիմումով և Փաստաբանի բացատրությամբ:

- Տվյալ գործով Փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ստորագրված չի եղել, ինչի արդյունքում էլ դատարանը տվյալ բողոքը վարույթ չի ընդունել: Սույն փաստը հաստատվում է Դիմումով և Փաստաբանի բացատրությամբ:

- 25.02.2020թ. Դիմողը գրություն է ուղարկել Պալատին, որով խնդրել է

փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել և նրան չենթարկել կարգապահական պատասխանատվության: Սույն փաստը հաստատվում է ներկայացված դիմումով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Դիանա Շախրամանյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015թ.-ից և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Դիանա Շախրամանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխիղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպատակավոր շահերից և բարեխիղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 6.1.3 կեղը սահմանում է՝ Կարգապահական վարույթը կարող է կարճվել կողմերի հաշտությամբ:

Դիմողի դիմումը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության չենթարկելու վերաբերյալ Պալատի խորհուրդն ըստ էության դիտարկում է, որպես կողմերի հաշտություն:

Վերոգրյալի հաշվառմամբ անդրադարձ չի կատարվում Փաստաբանին վերագրվող վարքագծի իրավաչափությանը և դրանով պայմանավորված՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 6.1.3 ենթակետի, 7.2.5 ենթակետի 2-րդ մասի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Դիանա Շախրամանյանի (արտոնագիր թիվ 2002) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19084 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

«Վ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան

**25 փետրվարի 2020թ.
թիվ ԿԳ/52-Ա
ք. Երևան**